նել կամիմ, թէ Քրիստոս է թագաւոր փառաց և պարծանք քրիստոնէից։ Եւ աւագ որդիս իմ ասաց. Այո՛ հայր, զայդ արա զի սպանցեն զմեզ, որ երթանք խառնիմք ի զաւրս թագաւորին Քրիստոսի։ Իսկ կրտսեր որդիս զայս ասաց. Ոչ է արժան զայդ առնել, զի մի զմեզ և զազգն մեր ամենայն ջնջեսցեն, և դուք իսկ ասէք թէ ամենայն ազգն չէր միապատիւ, այլ երթամք զտանեմք զսիրելի ազգն զայն եւ զառաջնորդն սուրբ, և խառնիմք յազգն այն մկրտելով ի նոցանէ, եւ մեր հաւանեալ իջաք ի վայր եւ տուաք հաց ամբոխին։ Եւ երթալ ի գեղն մեր առաք հինգ հարիւր կարմիր և երեք գրաստ և ելաք ի գիշերի և Աստուծով եկեալ եմք աստ, և արդ տեսաք նշան ինչ ի քեզ, եթէ յազգէն հայոց ես, և էք դուք ծառայք Քրիստոսի, և մեք կամիմք լինել իբրև ըզձեզ, և ելից առաջի իմ զոսկին. և ես ոչ առի անտի, և ես առեալ մկրտեցի զերեսին, և բերի յԵրուսաղէմ և առին հաղորդ և ասացին գնալ յայնկոյս ծովուն մեծի ի պատճառս աղօթից» (Դ. Թղ. էջ 526–527)։

զ) Յորդանանի դաշտին մէջ առանդական դեպք մը. — «Այր մի էր հոգետես Ռոմանոս անուն, ի գեղջէ Աբել-Մէուլա ի Պաղեստին, առաջնորդ եղբարց Զճոց, որք ասէին ցնա. ընդէ՞ր լռել կաս և ոչ նախանձիս զնախանձ Տեառն, և ասէին. խնդրեա ի Տեառնէ թէ զի՞նչ է աղմուկ ժողովոյն Քաղկեդոնի, որով խռովեալ է աշխարհ։ Եւ ասէ ցնոսա. ներեցէք զաւուրս ժ։ Եւ գնաց ընդ անապատն խնդրուածովք և արտասուօք, և եղև առ նա ձայն եւ ասէ. գնա եւ պահեա զհաւատն Նիկեայ։ Եւ եկեալ պատմեաց նոցա։ Ասեն եղբարքն, իսկ յայնք ասեն, թէ զՆիկեայ հաւատն մեր